

## Ֆեդիկ Ղազարյան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

### ԹՈՒՐՔ-ԲՈՒՆԵՎԻԿՅԱՆ ՁԻՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 1920 Թ. ՄԱՅԻՍ-ՕԳՈՍՏՈՍԻՆ

1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումը արմատապես բեկեց Ռուսաստանի քաղաքական և տնտեսական կյանքի ընթացքը: Իրավական որևէ հենարան չունեցող բուլշևիկյան խումտան այլընտրանքի այլ ճանապարհ չունենալով՝ ընտրեց բռնության և տեռորի ուղին: Իշխանությունը բռնազավթածների պատկերացմամբ միայն «արյան բաղնիքների» միջոցով է հնարավոր հասնել բանվոր դասակարգի դիկտատուրայի հաստատմանը: Դժբախտաբար, դա նրանց հաջողվեց և բուլղորվին հոգ չէր, որ 1918-1920 թվականներին Ռուսաստանի գրեթե ամբողջ տարածքում մոլեգնում էր «արյան մորիկը»: Խորհրդային պատմության ամենահամեստ տեղեկություններով, նախահեղափոխական շրջանի համեմատությամբ, արդյունաբերական արտադրանքը կրճատվեց ավելի քան 20 տոկոսով, ընդհանուր վնասը ավելի քան 50 միլիարդ ռուբլի էր՝ ոսկով, իսկ մարդկային կորուստները ռազմաճակատում և թիկունքում՝ ավելի քան 8 միլիոն մարդ<sup>1</sup>:

Այդ հեղաշրջումը բացասական հետևանք ունեցավ նաև Առաջին աշխարհամարտի հետագա ընթացքի վրա: Թուրքիայի հետ զինադադարի կնքումը և նախկին հակառակորդների հետ բանակցություններ սկսելու բուլշևիկների քայլերը առաջին հերթին ծանր կացություն ստեղծեցին Կովկասյան ճակատում: Ռուսական զորքերի հեռանալը մահացու հարված էր հայ ժողովրդի երկու հատվածներին: Հայկական զինուժը մնաց միայնակ թուրքական կանոնավոր բանակի դեմ:

Անկասկած, Եվրոպան տարակարծիք էր ռուսական դեպքերի առնչությամբ: Եթե գերմանացիները շատ զգուշավոր, նաև դրական գնահատեցին զինադադարը, ապա Չեռչիլի կարծիքով մեր առջև ուրվական է կանգնած, որը մնան չէ մինչ այդ աշխարհում գոյություն ունեցող որևէ բանի. «Մենք տեսնում ենք պետություն առանց պատկերի, բանակ առանց հայրենիքի, կրոն առանց աստծո»<sup>2</sup>:

Եթե Ռուսաստանը չներքաշվի պատերազմի մեջ, - գրում է Լ. Ջորջը, - ապա հեղափոխությունը կդառնա բուլղոր երկրներում ժողովրդական զանգվածների ճակատագիրը որոշող այն մեծագույն գործոններից մեկը, որը մարդկությանը երբևէ վիճակվել է դիտել կամ զգալ<sup>3</sup>:

Իսկ բուլշևիկները քայլ առ քայլ հետամուտ էին իրենց նպատակների՝ որքան հնարավոր է, շուտ իրագործմանը: Բանակցությունների ընթացքից գոհ էին նաև թուրքերը: 1917 թ. դեկտեմբերի 10-ին ռուս-թուրքական պատվիրակության վերջին պլենար նիստում Թուրքիայի պատվիրակը պարզապես հայտարարեց, որ երկու երկրներին վերաբերող հարցերը բարենպաստ լուծում կգտնեն, դրա համար «մենք պարտական ենք ռուսական պատվիրակությանը, որն այդ ծանր բանակցությունների ընթացքում դրսևորեց ուղղամտություն, արդարացիություն, գործնական իմաստ:

Նրանք ապացուցեցին, որ իրենք դեմոկրատիայի իսկական ներկայացուցիչներ են և դրա հետ միասին հիանալի դիվանագետներ ու պետական գործիչներ»: Ահա այս «ուղղամտության» արդյունքում կնքվեց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, և Կարսը, Արդահանը, Բաթումը բուլշևիկները զիջեցին թուրքերին: Դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ իրենց կողմից հորջորջված Թուրքահայաստանի մասին դեկրետի տապանաքարը:

Ահա այսպես, հաճոյանալու, քծնելու նմանօրինակ բազմաթիվ քայլերի արդյունքում, - գրում է Գ. Նժդեհը, - բուլշևիկների զինակցությամբ, ֆինանսական և մասնագիտական առատ օգնությամբ թուրքերին հաջողվեց պարտության մատնել հույներին և գերիշխանություն հաստատել Փոքր Ասիայի վրա, որտեղ գտնվում էին մեր երկրամասերը՝ Կարսը և Արդահանը<sup>1</sup>:

Թուրք-բուլշևիկյան զինակցության իրական պատճառների և Թուրքիային անվերապահ կործանումից փրկելու բուլշևիկյան Ռուսաստանի դերակատարության խընդիրները իրեն հատուկ նրբանկատությամբ, խորաթափանցությամբ է վերլուծել և գնահատել Գարեգին Նժդեհը: Նա նշում էր, որ Բրեստում բուլշևիկները հրաժարվեցին բուլղոր այն իրավունքներից, որոնք ցարական Ռուսաստանը ձեռք էր բերել նեղուցների և Փոքր Ասիայի նկատմամբ: Ու թեև Մուդրոսում փորվել էր սուլթանական Թուրքիայի անփառունակ գերեզմանը, միևնույն է միայն բուլշևիկները մնացին Թուրքիայի թև ու թիկունքը: Եթե կնքված չլիներ թուրք-բուլշևիկյան զինակցությունը Իգմիրի գրավման օրը, «...իր սակավաթիվ զինվորներով Պոլսից Սամսոն փախչող «գորշ գայլի» ճիչերը պիտի մնային անպտուղ»<sup>2</sup>: Նժդեհը վկայակոչելով «թուրք հանրապետության պատմության» հեղինակին՝ մեջբերում է նրա հետևյալ բնութագրական խոսքերը. «Բուլշևիկները եղել են Թուրքիայի «սև օրերի» միակ բարեկամը»: Լենինը, գրում է նա, - սերվել է ռուսացած թուրքծնողներից, հետևաբար «բուլշևիզմը փրկեց Թուրքիան և ոչ թե բախտահաս Քեմալը»<sup>3</sup>:

Հետևաբար Թուրքիան ունեցավ իր ամուր հենարանն ու դաշնակիցը, և նրանց համատեղ ջանքերի արդյունքում Հայաստանի Հանրապետությունը մնաց այդ երկու հավասարազոր ուժերի երախտ:

Ի՞նչ ընդհանուր չափեր ու նպատակներ ունեին Թուրքիան և բուլշևիկյան Ռուսաստանը և ինչու՞ էր Հայաստանը երկուսի համար էլ համարվում «զոհ», «կնճիռ»: Հայ խորհրդային պատմագրության մեջ այս հարցերի պատասխանը չափազանց դժվար է գտնել, որովհետև դրանք հիմնականում կողմնակալ են և իրենց վրա կրում են բուլշևիկյան (կոմունիստական) գաղափարախոսության ամբողջ ազդեցությունը: Ամեն գնով փորձել են արդարացնել բուլշևիկների քաղաքականությունը հատկապես Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, և 1918-1920 թթ. ՀՀ համար ստեղծված չափազանց բարդ աշխարհաքաղաքական իրադրության ամբողջ մեղքը բարդել քեմալական Թուրքիայի և Հայաստանի կառավարության վրա: Իսկ բուլշևիկյան Ռուսաստանը ներկայացված է որպես ազատարար, հայ ժողովրդի միակ բարեկամ, որն ամեն ինչ արել է թուրքերի մուտքը կասեցնելու դեպի Անդրկովկաս, դարձել հայ ժողովրդի փրկիչը<sup>4</sup>: Այս տեսակետներն, անշուշտ, վերաիմաստավորելու և իրադարձություններ

<sup>1</sup> Տե՛ս Նժդեհ Գ., Երկեր, հ., 2, Ե., 2002, էջ 187:

<sup>2</sup> Տե՛ս Մույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս Մույն տեղում, էջ 188:

<sup>4</sup> Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Ե., 1973: Նույնը, Դարավոր գոյամարտ, Ե., 1989: Աղայան Ծ., Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Ե., 1982: Ալեքսանյան Ա., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921 թթ.), Ե., 1964: Մնացա-

<sup>1</sup> Տե՛ս Советская историческая энциклопедия, т. 5., М., 1965, с. 79:

<sup>2</sup> Տե՛ս Черчилль У., Мировой кризис, М., 1932, с. 39:

<sup>3</sup> Տե՛ս Мирные переговоры в Брест-Литовске (под ред. А. Иоффе). М., 1920, т. 1, с. 39-40:

րի ընթացքը իրական փաստերի, հատկապես արխիվային փաստաթղթերի հիման վրա շարադրելու անհրաժեշտությունը առավել քան հրատապ է: Հատկապես դժվար է համակերպել այն մտքի հետ, թե բուլղարի կառավարությունը որևէ հնարավորություն չունի կանխելու կովկասյան ռազմածակատի կազմալուծումը և որ Բրեստի հաշտությունը այլընտրանք չունի: Ի դեպ, Ստ. Շահումյանը, որն ի պաշտոնն քաջատեղյակ էր ռուսական բանակի հեռանալուց հետո անդրկովկասյան իրադարձությունների ողջ ընթացքին, համարձակություն ունեցավ այդ պայմանագիրը որակել որպես չարաբաստիկ և Անդրկովկասի վրա թափված բուլղո ծախողումների պատճառ...<sup>1</sup>: Եվ շատ տարօրինակ է, որ պատմաբան Յ. Սարգսյանը փորձել է «սրբագրել» Ստ. Շահումյանին, թե նա Բրեստը չարիք էր համարում, որովհետև այդ չարիքը բխում էր ուժերի հարաբերակցությունից<sup>2</sup>:

Մուստաֆա Քեմալի կենսագիրներից մեկը «Քեմալի ֆենոմենը» մենագրության մեջ<sup>3</sup> շատ հանգամանակից և փաստարկված ներկայացրել է նրա և բուլղարի Ռուսաստանի զինակցության էվոլյուցիան և այդ զինակցության դրոշմապատճառները, որոնց շուրջ ընդհանուր մերժեցման նպատակներ ունեին երկու պետություններն էլ հավասարապես: Նրա կարծիքով Արևմուտքի և Հայաստանի դեմ պայքարը միասնական նպատակ էր հետապնդում և պատահական չէր, ինչպես կարծիք է հայտնում Կարաբեքիրը, Քեմալին ստիպեց առաջին անգամ խոսել բուլղարի հետ տակտիկական դաշինքի անհրաժեշտության մասին: Նա (Քեմալը), իհարկե, չէր կարողացել Լենինին և նրան այդքան էլ հասկանալի չէր կոմունիստական գաղափարների ելությունը, բայց հասկանում էր փոխզիջման կարևորությունը, որը ստեղծված իրադրության պայմաններում ազատ ու անկաշկանդ գործելու հնարավորության մեծ դաշտ էր ստեղծում:

1919 թ. ամռանը Քեմալին էր հանդիպել կարմիրների հայտնի հեծելազորի ղեկավար Ս. Բուրյոնին և նրան առաջարկել բուլղարի կողմից զենքի և ֆինանսական միջոցների աջակցություն, պայմանով, որ Թուրքիան (Քեմալը) ընդունի կոմունիստական իդեալները, որոնք կերչանկացնեին թուրք եղբայրներին արյունակեր բուրժուազիայի դեմ պայքարում<sup>4</sup>: Իհարկե, Լենինն ու Տրոցկին նման բանակցությունների կարող էին ուղարկել ավելի գրագետ, զոնե ռուսերենի փայլուն իմացություն ունեցող մարդու, սակայն դա բուլղարի կարևոր չէր: Քեմալը Մոսկվա ուղարկեց Խալիլ փաշային, որին հաջողվեց 1920 թ. գարնանը Ռուսաստանից ստանալ զենքի առաջին խմբաքանակը<sup>5</sup>: Իսկ 1920 թ. օգոստոսի 4-ին Ռուսաստանը համաձայնվում է Թուրքիային տրամադրել 5 միլիոն ռուբլի ոսկով, 200 հազար հրացան, 500 գնդացիր, 200 ինքնաթիռ, 1100 բեռնատար, 40 մարդատար վագոն...<sup>6</sup>:

Այնուամենայնիվ, Քեմալը իրեն այնքան էլ վստահ չէր զգում: Ազգային մեծ հիմնադիր ժողովում թեև Արմատական խորհրդի բուլղո անդամները Սևրի դաշնագիրը

ստորագրելու համար հայտարարվեցին թուրք ազգի դավաճաններ, սակայն պատգամավորները Քեմալին քննադատում էին, որ նա ոչ թե ճառեր պետք է ասի, այլ ղեկավարի բանակը<sup>1</sup>: Քեմալը դա շատ լավ էր հասկանում, բայց չէր շտապում դեպի բանակ: Համոզված էր՝ Լոնդոնը ամեն գնով խոչընդոտում էր Թուրքիային և Ռուսաստանին ընդհանուր սահման ունենալու խնդրի լուծմանը: Իսկ Ռուսաստանից նոր խմբաքանակ զենքի ստացումը ձգձգվում էր: Ամեն ինչ շուտով հարթվեց և քեմալաբուլղարի ծրագիրն արդեն գործողության մեջ դրվեց 1920 թ. սեպտեմբերի վերջին՝ հայ-թուրքական պատերազմի սկսումով:

Հայաստանի Հանրապետության և բուլղարի Ռուսաստանի առանց այդ էլ ոչ բարվոք հարաբերությունները չափազանց լարված բնույթ ստացան 1920 թ. սկզբին, երբ դաշնակից երկրները հունվարի 19-ին ճանաչեցին ՀՀ կառավարության անկախությունը<sup>2</sup>: Բացի այդ բուլղարից հաջողվել էր լուրջ հաջողությունների հասնել հակահեղափոխական ուժերի և նրանց աջակցող երկրների նկատմամբ: Համագործակցության երկրները զգացին, որ համեմատաբար թույլ զինված ուժերով իրենք չեն կարող փակել դեպի Անդրկովկաս շարժվող ռուսական ուժերի առաջխաղացումը: Մինչ այդ պաշտոնապես ճանաչվել էր նաև Վրաստանի ու Ադրբեջանի կառավարությունների անկախությունը: Ու թեև Հայկական հարցը շարունակվում էր քննարկվել Փարիզում, և վերջնականապես ճշտված չէին նրա սահմանները, միևնույնն է, դաշնակիցները որևէ ձևով չկարողացան ազդել Ռուսաստանի վրա, և բուլղարի 11-րդ կարմիր բանակը անարգել մոտեցավ Անդրկովկասի սահմաններին ու 1920 թ. ապրիլին Ադրբեջանը կամավոր հռչակվեց բուլղարի: Բռնությամբ խորհրդային կարգեր հաստատվեցին նաև Արցախում:

Հետամուտ լինելով ամբողջ Անդրկովկասը բռնի խորհրդայնացնելու իր նպատակներին՝ բուլղարի Ռուսաստանի կառավարությունը նույն թվականի մայիսին Մոսկվա հրավիրեց Անդրկովկասի երեք հանրապետությունների պատվիրակություններին՝ իբր սահմանային վեճերը քննարկելու համար: Հատկանշական է, որ Մոսկվայում բուլղարիները ճանաչեցին Վրաստանի ու Ադրբեջանի անկախությունը, իսկ Հայաստանի անկախության ճանաչման հարցը, ի թիվս այլ հարցերի, հետաձգվեց, իբր դրանք պետք է քննարկվեին երևանյան բանակցությունների ժամանակ: Մինչդեռ դա Լենինի և Քեմալի պայմանավորվածության արդյունքն էր: Հայաստանի անկախության ճանաչումը կնշանակեր գործ ունենալ միջազգային սուբյեկտի հետ, իսկ դա նրանց ծրագրերում տեղ չունի: Այս իմաստով հետաքրքրական է հայկական պատվիրակության ղեկավար Լ. Շանթի նամակը ՀՀ կառավարությանը, որտեղ նա զգուշացնում էր բուլղարի կողմից մեծ քանակությամբ գրականություն Հայաստան ուղարկելու Մոսկվայի մտադրությունների մասին: Լ. Շանթը նաև տեղյակ էր պահում, որ Քեմալի ներկայացուցիչները արդեն Մոսկվայում են և իրենց մնալը Մոսկվայում այլևս իմաստ չունի<sup>3</sup>:

Անկասկած, Հայաստանի անկախությունը չճանաչելը բուլղարիներն առաջին հերթին փորձում էին արդարացնել արևմտամետ կողմնորոշում ունենալու հանգամանքով: Այդ մասին Մոսկվայում Ռուսաստանի արտգործնախարար Գ. Չեչերինը հասկացրեց մեր պատվիրակության ղեկավար Լ. Շանթին: Սա հարցի մի կողմն է: Իրա-

կանյան Ար., Հոկտեմբերի բարիկադների վրա (1917-1920 թթ.), Ե., 1987: Հարությունյան Ս., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Ե., 1984 թ: Խուրշուդյան Լ., Խորհրդային Ռուսաստանը և Հայկական հարցը, Ե., 1977: Ахтамаян А., «От Брестадо Кияя», М., 1963. Борьян Б., «Армения, международная дипломатия и СССР», М.-Л., 1928., т. 1., 1929., ч. 2 և այլն:

<sup>1</sup> Տե՛ս Շահումյան Ստ., ԵԼԺ., հ. 5, Ե., 1978. էջ 83:

<sup>2</sup> Տե՛ս Սարգսյան Յ., «Բրեստից մինչև Մոսկոն», Ե., 1989, էջ 215:

<sup>3</sup> Տե՛ս Ушаков А., Феномен Ататюрка, М., 2002, см. 384:

<sup>4</sup> Լույնը, էջ 160:

<sup>5</sup> Լույնը, էջ 161:

<sup>6</sup> Տե՛ս Документы внешней политики СССР, М., 1958, т. 2., ст. 46:

<sup>1</sup> Տե՛ս Ушаков А., Феномен Ататюрка, М., 2002, см. 179:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ., ֆ. Պ-43, ց. 1, գ. 124, ք. 19:

<sup>3</sup> Տե՛ս ՀԱԱ., ֆ. պ-200, ց. 1, գ. 23, ք. 325:

կանում բուլղարների գլխավոր նպատակը Արցախը, Սյունիքը, Նախիջևանը և Շարուր-Ղարալագյազը բռնազավթման ենթարկելն էր, որը կհեշտացներ քեմալական թուրքիայի հետ միասնական սահմանի ստեղծումը: Իսկ Հայաստանը, նրա հետագա ճակատագիրը կամ պետական կառուցվածքը նրանց բացարձակապես չէր հետաքրքրում: Խնդիրը պարզ էր. որքան հնարավոր է բռնությունների, ահ ու սարսափի պայմաններ ստեղծել, հնարավորինս արագ խորհրդայնացնել Հայաստանի հարավային երկրամասերը: 1920 թ. հուլիսի 4-ին թուրք-թաթարական և կարմիր հրոսակները մտան Ջանգեզուր և հաջորդ օրը գրավեցին Գորիսը: Քեմալականների հետ սահմանային դաշինքը օրակարգի հարց էր:

Օգոստոսի 24-ին կնքված թուրք-բուլղարական համաձայնագիրը ընդամենը առաջին քայլն էր այն մեծ նախագծի, որը դարձավ ռուս-թուրքական բարեկամության պայմանագիր (1921 թ. մարտի 16)<sup>1</sup> մեզ համար աղետալի բուլղար հետևանքներով:

Ընդամենը մի քանի ամիսների ընթացքում բուլղարները երկրամասը վերածեցին կատարյալ դժոխքի: Արիստոկրատները վկայում են, որ բուլղարները վայրագությունների մասնակից էին դարձնում ցարական կառավարության կողմից դատապարտված և ազատ արձակված թուրք հանցագործներին, որոնք անարգել մուտք էին գործում հայկական գյուղերը, սպանում մարդկանց: Նրանք հրկիզել են ավելի քան 30 գյուղ, անհետացել են տասնյակ պատանիներ ու երիտասարդներ<sup>1</sup>: Դաշնակցական գործիչների անվան տակ կատարվում էին զանգվածային ձերբակալություններ. հրամայված էր չխնայել 1-4 տարեկան երեխաներին<sup>2</sup>: Պարզապես ապշեցուցիչ էր, որ կարմիրների հետ Բաքվից երկրամաս ժամանած հայ բուլղարները որևէ միջոց չէին ձեռնարկում ինչ-որ ձևով բռնությունները կանխելու համար: Ընդհակառակը «հայ կոմունիստները եռանդ չէին խնայում իրենց կործանարար գործողությունների մեջ, վայրագություններով մրցում էին թուրք հայակերների ու գազազած ռուսների հետ»<sup>3</sup>:

Այստեղ հարկ է մեջ բերել հայ զինվորի դիմումը կարմիր բանակի զինվորներին, որը թուրքիկի տեսքով տարածվել է Ջանգեզուրում և Ղարաբաղում: Այնտեղ ասված է հետևյալը. ...քեզ կանգնեցրել են Ռուսաստանի դարավոր թշնամի թաթարների ու տաճիկների շարքում, որոնք տակավին շարունակում են մորթել մեր քույրերին ու երեխաներին: Նրանք քեզ ընկեր լինել չեն կարող, ես դրան չեմ հավատում: Հիշու՞մ ես, 1918-ին նրանք ամբողջ խմբերով Շամխորի, Շահթախտի մոտ գնդակահարում էին քո ռուս ընկերներին, դիակներով էին լցվում Գանձակի հորերը: Քեզ խաբել են: Ռուսաստանին պետք չի ոչ Ջանգեզուրը, ոչ Նախիջևանը և ոչ էլ Ղարաբաղը: Դա թուրքերին է պետք, արյամբ նվաճելու դրանք: Քեզնից մենք օգնություն ենք ուզում, ոչ մահ: Մի՛ թափիր հայի արյուն, որն ինչպես գիտես չի վաճառում իր ազատությունը և հայրենիքի անկախությունը<sup>4</sup>:

Ահա անօրինակ այս արարքներով բուլղարները հարկադրեցին ՀՀ կառավարությանը, որ նույն օրը, երբ կնքվեց Սևրի դաշնագիրը, օգոստոսի 10-ին Թիֆլիսում ստորագրվի հաշտության համաձայնագիր՝ «վիճելի» ճանաչելով Սյունիքը, Ղարաբաղը, Նախիջևանը, որոնք ժամանակավորապես մնում են բուլղարների հսկողու-

թյան տակ<sup>1</sup>: Այս որոշումը ոչ այլ ինչ էր, քան հայկական երկրամասերի հանձնում բուլղարական Ադրբեջանին:

«Վիճելի» տարածքներ մուտք գործած թուրք-բուլղարական ստահակների կողմից տեղի հայ ազգաբնակչության նկատմամբ կատարված վայրագությունների ու ոճրագործությունների ամբողջական պատկերը հետխորհրդային պատմագրության մեջ առաջին անգամ ներկայացվել է Ա. Գ. Սիմոնյանի «Ջանգեզուրի գոյամարտը 1920-21 թթ.» մենագրության մեջ<sup>2</sup>: Փաստական հարուստ նյութի հիման վրա ստեղծված այս արժեքավոր ուսումնասիրությունը ակնառու վկայությունն է այն բանի, որ բուլղարներն ու թուրք թաթարները գործում էին միասնական ծրագրով և հետապնդում միասնական նպատակ՝ չթաքցնելով, որ դաշնակիցների ճանապարհը փակելու համար, իբր հրատապ ու անխուսափելի է դառնում Ղարաբաղի, Ջանգեզուրի և Նախիջևանի գրավումը<sup>3</sup>: Դրանով է բացատրվում այն փաստը, որ երկրամասում կատարվող ոճրագործությունների վերաբերյալ ՀՀ կառավարության պաշտոնական հարցադրումներին ՌՍՖՍՀ արտգործնախարարությունը միշտ էլ տվել է խուսափողական, անորոշ պատասխաններ: Այդպիսի անորոշ բովանդակություն ուներ նաև օգոստոսի 2-ին Հայոց պառլամենտի երկու անդամների զնդակահարության մասին արտգործնախարարության պատասխանը, թե իբր «հանձնարարված է» Կովկասյան բուլղարների ղեկավարությանը ուսումնասիրել պաշտոնական անձանց զանգվածային զնդակահարությունները<sup>4</sup>: Ավելին, վաղօրոք Ռուսաստանի արտգործնախարարը ՀՀ վարչապետին պատասխանել էր, որ պառլամենտի անդամների զնդակահարության մասին որևէ տեղեկություն չունի<sup>5</sup>:

Այսպիսով, հայ խորհրդային պատմագրությունից դուրս են մնացել առանցքային նշանակության մի շարք հարցեր, որոնց հետևանքով չափազանց դժվար է ամբողջական և իրական պատկերացում ունենալ մեր պատմության 1918-1920 թթ. իրադարձությունների մասին:

1. Մասնավորապես ամբողջական և ճիշտ է ներկայացված քեմալականների ոճրագործ գործողությունների ամբողջ պատկերը, սակայն գրեթե ոչինչ չի ասվում բուլղարների հակահայ քաղաքականության մասին: Մինչդեռ փաստերի պակաս գրեթե չկա:

2. Սևրի դաշնագիրը թաղվեց, անկասկած, թուրքիայի մեղքով: Այս հարցում, սակայն, բուլղարական Ռուսաստանը նույնպես ունեցել է իր դերակատարությունը: Լեոնինը երբեք չէր կարող հանդուրժել, որ իր և եղբայր թուրքիայի միջև գոյություն ունենար անկախ Հայաստան, այն էլ արևմուտքի ազդեցության տակ<sup>6</sup>: Հատկանշական է 1920 թ. հոկտեմբերին Թալեաթի նամակը Քեմալին: Ռուսները, գրում է նա, ամեն ինչով կարող են օգնել Հայաստանին, բայց երբեք չեն խանգարի մեր առաջխաղացմանը դեպի Հայաստան:

3. Կարծում ենք սխալ է այն տեսակետը, թե բուլղարական կարգերը եթե ավելի շուտ՝ 1917-18 թթ., հաստատվեին Հայաստանում, ապա տարածքային կորուստները քիչ կլինեին: Եթե թուրքիայի մասնատումը Առաջին աշխարհամարտից հետո

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ., ֆ. պ-200, ց. 1, գ. 621, ք. 28:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>4</sup> Տե՛ս «Աշխատավոր», № 125, 8.09.1920 թ.:

<sup>1</sup> ՀԱԱ., ֆ. պ-200, ց. 1, գ. 607, ք. 20:

<sup>2</sup> Տե՛ս Սիմոնյան Ա., Ջանգեզուրի գոյամարտը 1920-21 թթ., Ե., 2002, էջ 669:

<sup>3</sup> Տե՛ս նույնը, էջ 152:

<sup>4</sup> ՀԱԱ., ֆ. պ-200, ց. 1, գ. 60, ք. 3:

<sup>5</sup> Տե՛ս նույնը, ք. 29:

<sup>6</sup> Տե՛ս Ушаков А., Феномен Атагорка, М., 2002, с. 198:

կանխորոշված էր, և թուրքական դիվանագիտությունը կարողացավ խուսափել այդ վտանգից, ապա Հայաստանի մասնատումը նույնպես կանխորոշված էր Թուրքիայի և բուլղարիայի Ռուսաստանի պլաններում: ՀՀ դիվանագիտությունը պարզապես չկարողացավ դիմակայել մարտահրավերներին:

4. Հայ բուլղարիկների ազգադավ գործողությունը, որ ի վերջո հանգեց ՀՀ անկախության կորստին, նույնպես վերաիմաստավորելու և ճշմարիտ գնահատական տալու անհրաժեշտություն ունի:

*Федик Казарян, О вопросе военного сотрудничества большевистской России с кемальской Турцией и их отношение к Армении.* - В статье представлены факты, которые утверждают причины союза большевистской России и кемальской Турции, их враждебное отношение к республике Армении в 1918-20-их годах. В частности рассмотрены вопросы антиармянской политики большевиков в этот период которые имеют кардинальное значение, но отсутствуют в советской армянской историографии.

*Fedik Ghazaryan, About the question of military cooperation of the Bolshevik Russia and Kemalist Turkey and their relation to Armenia.* The article contains facts, which confirm the reasons of the union, their hostile behavior to the Republic Armenia in the 1918-20. Particularly the article deals with problems of antiarmenian policy of Bolsheviks in this period, which are of core importance but are missing in the soviet Armenian historiography.